

Արսեն Է. Հարությունյան

Պատմ. գիտ. թեկնածու

Սերժիու Վ. Մատվեն (Քիշնև, Մոլդովա)

Պատմ. գիտ. թեկնածու

ԻԶՄԱՅԻԼԻ ՀԱՅԵՐԵՆ ՎԻՄԱԳՐԵՐԸ.

ՆՈՐ ԳՏԱԾՈՆԵՐ*

Բանալի բառեր - Իզմայիլ, Մոլդովայի հայ համայնք, եկեղեցի, վիմագիր, տապանաքար, Քուչուկ-Հովհաննիսյան, Բեսարաբիա, գերեզմանոց, վավերագիր:

Մուտք

Բագրատունյաց թագավորության թուլացումն ու անկումը 1045 թ., ապա թուրք-սելջուկների ու մոնղոլ-թաթարների 11-13-րդ դդ. արշավանքները ստիպեցին բազմաթիվ հայերի արտագաղթել Հայաստանից ու Փոքր Ասիայից և հաստատվել հատկապես Ղրիմի թերակղզում, որտեղից էլ շատերն անցան Մոլդովա, Ռումինիա, Բուլղարիա, Լեհաստան և Հարավային ու Արևելյան Եվրոպայի այլ երկրներ:

Չնայած նրան, որ մինչ օրս պատմագիտության մեջ հայերի՝ Մոլդովայում հաստատվելու ժամանակաշրջանի վերաբերյալ չկա միասնական կարծիք, այդուհանդերձ ընդունված է ասել, որ Մոլդովայի հայ գաղութը սկսել է ձևավորվել առնվազն 10-11-րդ դդ. և ծաղկում է ապրել 14-15-րդ դդ.¹:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.10.2019:

1 Տես **Торамания А.**, Армяне и памятники армянской культуры на территории Молдавии XIV-XIX вв. в источниках и литературе, Պատմա-բանասիրական հանդես, 1976, N4, էջ 175: Հմմտ. **Մույն Իեղինակի** Մոլդովայի հայկական պատմաճարտարապետական հուշարձանները, Եր., 1986, էջ 3, Из истории строительной деятельности армян в Молдавии, М., 1991, էջ 4-5: Հայերի Մոլդովայում հաստատվելու պատճառների ու ժամանակաշրջանի վերաբերյալ հայագիտության մեջ առկա են տարբեր կարծիքներ: Այսպես, պատմաբան Լ. Բարայանի համոզմամբ, հայերը Մոլդովայում հաստատվել են 14-րդ դարից առաջ, քանի որ Տաշ, ինչպես նաև Պոթիջան քաղաքների հայկական եկեղեցիների կառուցման արձանագրությունները թվագրվում են 14-րդ դարով (տես **Բարայան Լ.**, Հայերը Մոլդավիայում եւ Բուլղարիայում. պատմա-ագագրական ուսումնասիրություն, Թիֆլիս, 1911, էջ 38-39): Ավելի ուշ, Գրիգորիապոլ գաղթած հայերի օրինակով, մոլդովական գաղութի պատմությունն ուսումնասիրել է Ժ. Անանյանը, որի կարծիքով՝ Մոլդովայի և Բեսարաբիայի հատկապես քաղաքային բնակավայրերում (Սուչավա, Աքբերման, Կիլիա և այլն) հայկական գաղութներ են ստեղծվել սկսած 10-11-րդ դարերից, իսկ ծաղկման հասել 15-16-րդ դդ. (տես **Անանյան Ժ.**, Հայերի Մոլդավիա և Բեսարաբիա գաղթելու պատմությունից, «Լրաբեր» հաս. գիտ., 1966, N 9, էջ 93): Ըստ պատմաբան Մ. Հովհաննիսյանի՝ Մոլդովայի (նաև հարակից երկրների) Հարավային Ռուսիա, Վալախիա, Պոդոլիե) հայ գաղթօջախը ձևավորվել է 13-րդ դարի սկզբներից (տես Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հատ. Ա., խմբ. ակադ. **Միքայելյան Վ.**, Եր., 2003, էջ 64), իսկ պատմաբան Հովհ. Ալեքսանյանի հավաստմամբ՝ Մոլդովայի հայ գաղութը ստվարացել է հատկապես 1359 թ. մոլդովական իշխանության հաստատումից հետո, որից շատ չանցած՝ 1401 թ., Մոլդովայի երբեմնի մայրաքաղաք Սուչավայում (ներկայումս

Հայաշատ Բեսարաբիայի մարզը, որը տեղակայված էր Դնեստր, Պրուտ և Դանուբ գետերի ստորին ավազանում, 14-րդ դարի կեսերից ենթարկվում էր մոլդովական իշխանությանը: Բեսարաբիան 16-19-րդ դդ. գտնվում էր թուրքական ծանր լծի տակ, երբ Բուխարեստում 1812 թ. մայիսի 16-ին հայ դիվանագետ Մանուկ բեյի միջնորդությամբ ստորագրվեց ռուս-թուրքական հաշտության պայմանագիրը, որով թուրքերը Բեսարաբիան զիջեցին Ռուսաստանին²: Տարածաշրջանի հայկական նշանավոր գաղութներն էին Քիշնևը, Աքքերմանը (Բելգորոդ-Դնեստրովսկի), Բելցը, Գրիգորիոպոլը, Իզմայիլը և այլ քաղաքներ ու ավաններ, որտեղ հայերն ունեցել են իրենց հոգևոր-մշակութային կյանքը և զբաղվել հատկապես արհեստագործությամբ ու առևտրով:

Սույն ուսումնասիրությունը նվիրված է պատմական Բեսարաբիայի կազմում գտնվող Իզմայիլ (Իսմայիլ)³ քաղաքի (ներկայումս Ուկրաինայի Օդեսայի մարզում) հայերեն վիմագրերին, որոնցից երկուսը, որոնք 18-րդ դարի տապանագրեր են, փաստագրվել են վերջերս: Դրանք լուսանկարել, չափագրել և վերծանության համար մեզ է տրամադրել Քիշնևի պետական համալսարանի պատմության և փիլիսոփայության ֆակուլտետի դեկան, հնագետ **Սերժիու Մատվեևը**: Իզմայիլի նախկինում հրատարակված վիմագրերը ներկայումս չեն պահպանվել, ուստի այս տեսանկյունից ևս նորահայտ արձանագրությունների հրատարակումն ունի աղբյուրագիտական մեծ արժեք: Տապանագրերից առաջինը թվագրված է 1725 թվականով, երկրորդը՝ 1758 թվականով: Մինչ վերծանություններին անցնելը անդրադառնանք Իզմայիլի հոգևոր-մշակութային կյանքի և արձանագրությունների վերաբերյալ նախորդ հետազոտողների աշխատություններին:

Ա. Իզմայիլում հայերի բնակության մասին վկայող հրատարակված, բայց չպահպանված վիմագրեր

Իզմայիլ բերդաքաղաքում հայերի բնակության մասին ամենավաղ տեղեկությունը հաղորդում է ֆրանսիացի միսիոներ Մարիա Լուիջի Պիդոնի⁴ իր 1669 թ. ճանապարհորդական տպավորություններում: Ավելի ուշ ռումինացի պատմաբան Նիկոլայ Յոր-


Ռումինիա) իշխան Ալեքսանդր Բարեպաշտի (1400-1432) հրովարտակով հաստատվում է Մոլդովայի հայ համայնքի եկեղեցական թեմը՝ Հովհաննես Եպիսկոպոսի գլխավորությամբ: Միաժամանակ հայերին տրվել են որոշ արտոնություններ, ազատ առևտուր անելու իրավունք և այլն (մանրամասն տես **Александр О.**, Армяне и армянская церковь в Молдавии, «Из истории армяно-украинских, венгерских и молдавских отношений», Сборник статей и материалов, сост. **Хачатрян К., Александр О.**, Ер., 2012, էջ 167-168):

2 Տես Հայոց պատմություն, հատ. 3, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918 թ.), գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես - XIX դարի վերջ), խմբ. **Մելքոնյան Ա.** և ուրիշներ, Եր., 2010, էջ 238:

3 17-րդ դարի թուրք ճանապարհորդ Եվլիա Չելեբիի հաղորդմամբ 1484 թ. քաղաքը նվաճվել է սուլթան Բաեզիդ խան Իսմայիլի կողմից, որի անունով էլ այն կոչվել է Իզմայիլ: 17-րդ դարի առաջին կեսին քաղաքում կար 2000 տուն, մահմեդական, հունական, հայկական և հրեական թաղամասերով: Նշանավոր այրերից է Չելեբին իշխատակրում է երմենի օղյուհի, Մուրադ օղյուհի և ուրիշների, որոնք հիմնականում առևտրով էին զբաղվում (տես **Челеби Э.**, Книга путешествия (Извлечения из сочинения турецкого путешественника XVII века), вып. 1, земли Молдавии и Украины, М., 1961, էջ 31-32):

4 Մեջբերումը ըստ՝ տես **Siruni H.**, Armenii in România cu prilejul unui centenar, București, 1940, էջ 17:

գան նշում է, որ մինչև 1693 թ. Իզմայիլի հայկական եկեղեցին գտնվում էր տեղի հայ եպիսկոպոսի իրավասության տակ⁵: Քաղաքը հայաշատ է եղել մինչև 18-րդ դարավերջը, երբ ռուս-թուրքական երկրորդ պատերազմի (1787-1791թթ.) ընթացքում ռուս մեծ զորավար **Ալ. Սուվորովը** 1790 թ. դեկտեմբերի 23-ին գրավեց Իզմայիլի բերդը, որին հաջորդեց ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ արք. Արղույանի (նաև Ստեփան Դավթյանի և Գրիգոր վրդ. Զախարյանի) կազմակերպած արտագաղթը Իզմայիլից դեպի նոր հիմնված Գրիգորիոպոլ (հայաքաղաք է հռչակվել Եկատերինա Բ. կայսրուհու 1792 թ. հուլիսի 25-ի հրավարտակով)⁶: Պատահական չէ նաև Գրիգորիոպոլի հայկական գերեզմանոցներից մեկի «Իզմայիլյան» անվանումը, որտեղ, ըստ ամենայնի, ամփոփվել են Իզմայիլից գաղթած հայերի մարմինները⁷: Այնուհետև Իզմայիլի հայերի թիվը նվազել է. Մխիթարյան միաբան Հ. Մինաս Բժշկյանի հաղորդմամբ՝ 1820-ականներին Իզմայիլում բնակվում էր ընդամենը 60 հայ ընտանիք⁸: Պահպանված արխիվային վավերագրերի միջոցով պարզվել է, որ 1840 թվականից մինչև 1915 թվականը հայերի թիվը շարունակել է նվազել⁹:



1. Իզմայիլի հայկական Ս. Աստվածածնի Վերափոխման (կոչվում է նաև Ս. Գևորգ) եկեղեցին և հատակագիծն ըստ Ա. Թորամանյանի (քանդվել է 1960-ականներին)

5 Sten Studii istorice asupra Chilieii și Cetății-Albe de **Nicolae Iorga**, București, 1900, էջ 193:

6 Sten **Ананян Ж.**, Армянская колония Григориополь, Ер., 1969, էջ 35: Հմնտ. **Тораманян А.**, Из истории строительной деятельности армян в Молдавии, էջ 45, Հայոց պատմություն, հատ. 3, գիրք առաջին, եր., 2010, էջ 163-164:

7 «Դիվան հայ վիճաբուխան» (այսուհետև՝ ԴՀՎ) համապատասխան արվելու մասին հարցազրույցից հրատարակել է 15 տապանագիր, մի մասը երկեզու (տես ԴՀՎ, արվել VII, Ուկրաինա, Մոլդովա, կազմեց **Գրիգորյան Պր.**, եր., 1996, էջ 311-317, արձ. 747-761): Գրիգորիոպոլի Ք. Քուչուկ-Հովհաննիսյանի հրատարակած երբեմնի հայերեն տապանագրերից ուշագրավ է հետևյալը. «Այս է տապան հանգստեան Ամասիացի մահտեսի Աստուածատուրի որդի Աւետիք(ի), որ է հանգուցեալ Իսմայիլ, թվին ՌՄԷ. (1788), յունվարի ԺԵ.-ին (15)» (**Кучукъ-Іоаннесовъ Х.**, Армянскія надписи въ г. Григориополь Херсонской губернии, "Древности восточная" изъ II тома Трудовъ Восточной комиссіи Императорскаго московскаго археологическаго общества, М., 1896, էջ 11, N 9, տես նաև **Тораманян А.**, Из истории строительной деятельности армян в Молдавии, էջ 52): Սա կարծես ապացույցն է այն բանի, որ, Իզմայիլից տեղափոխվելով Գրիգորիոպոլ, հայերն իրենց հետ տարել են նաև հարազատների շիրմաքարերը: Այս է փաստում նաև Հ. Մինաս Բժշկյանը, երբ, նկարագրելով Գրիգորիոպոլի Ս. Խաչ նորակառույց եկեղեցին, նշում է, որ «տեսաք ի սմա մարմարիոնեայ տապանս բերեալս յիսմայիլէ ընդ իւրեանս, որք չեն այնչափ հնագիր. «Այս է տապան հանգստեան Սաֆարի որդի Աստուածատուրին, որ հանգեալ թվին ՌՃՀ-ին (1721)»» (**Հ. Մինաս Բժշկեանց**, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ այլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ 184):

8 Sten **Հ. Մինաս Բժշկեանց**, նշվ. աշխ., էջ 216:

9 Sten **Տ. Սահակ վարդապետ Շաքարյան**, Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց թեմը, Ս. էջմիածին, 2014, էջ 123-124:

Իզմայիլի հայկական Ս. Աստվածածին եկեղեցին, որը, ըստ ամենայնի, կառուցվել է 17-րդ դարում, նախկինում հրատարակված վիմագրերից մեկի համաձայն, հիմնանորոգվել է 1763 թ.: Այն չի պահպանվել, իսկ հայտնի արձանագրությունները, որոնք հիմնականում տապանագրեր են, դեռևս 19-րդ դարավերջին տեղափոխվել են Իզմայիլի Արմյանական փողոցում կառուցված եկեղեցու բակ¹⁰ (նկ. 1), որտեղից Հայր Էլմազյանի կարգադրությամբ դարձյալ փոխադրվել են հայկական նախկին եկեղեցու տարածք¹¹: Կոթողների ներկայիս գտնվելու վայրի մասին տեղեկություն չկա: Որոշ վիմագրեր նախորդ դարակազմի հրատարակել է Քրիստափոր Քուչուկ-Հովհաննիսյանը՝ նշելով, որ մարմարյա 25 արձանագիր տապանաքարերը Ս. Աստվածածնի Վերափոխման եկեղեցու բակում տեսել է անմխիթար վիճակում, մի մասը՝ շրջված, գրերը՝ ծածկված տիղմով, ուստի տեղի աշխատակիցների օգնությամբ կարողացել է ուղղել շրջված տապանաքարերը (բացառությամբ մեկի), մաքրել գրերն ու վերծանել: Ուսումնասիրողը հավաստում է, որ տապանաքարերն ակնհայտորեն իրենց սկզբնական տեղում չեն, այլ բերվել են հայկական հին եկեղեցու հարակից գերեզմանոցից, որն ավերածության է ենթարկվել զորավար Ալ. Սուվորովի կողմից՝ Իզմայիլի բերդը գրավելու տարիներին, այսինքն՝ 18-րդ դարավերջին¹²: Ցավոք, Քուչուկ-Հովհաննիսյանն իր ընդօրինակած արձանագրություններից հրատարակել է միայն յոթը և ներկայացրել ևս մեկի բովանդակությունը, իսկ մյուսների մասին չի հիշատակում¹³: Հետագայում նրա վերծանությունները վիմագրագետ Գրիգոր Գրիգորյանն ընդգրկել է «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի՝ Ուկրաինայի և Մոլդովայի հայերեն վիմագրերին նվիրված հատորում¹⁴: Այսպես,

10 Այս նոր եկեղեցին կառուցվել է 19-րդ դարի սկզբներին, քանի որ 1840 թ. այն արդեն հիշատակվում է: Այս համատեքստում հատկանշական է պատմաբան Գ. Բեզվիկովի հաղորդած տեղեկությունը, ըստ որի Իզմայիլում հայկական եկեղեցու հիմնադրումը փոքր-ինչ ավելի ուշ է եղել, մասնավորապես եկեղեցու հիմնադիր է հիշատակվում ծագումով Վ. Պոլսից Կարապետ Մարգարյանը (1816-1892), որը թաղված է եկեղեցու հարևանությամբ (տես **Bezviconi C.**, *Morminte armenești dintre Prut și Nistru*, In: **H. Dj. Siruni**, *Anuarul culturii armenie*, București, 1941, էջ 390): 1910 թ. եկեղեցին փակվել է, սակայն, աղքյուրների հաղորդմամբ, որոշ դադարներով գործել է մինչև 1940 թ. (տես **S. Սահակ վարդապետ Շաքարյան**, Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց թեմը, էջ 123, ծնթ. 3): 1960-ականներին եկեղեցին քանդել և տեղում կառուցել են «Իզմայիլ» իյուրանոցը: Տեղեկություններ կան նաև այն մասին, որ Իզմայիլում է գտնվել Ս. Չուրոզ փայտաշեն եկեղեցին (տես **Торамания А.**, *Из истории строительной деятельности армян в Молдавии*, էջ 58), որը երբեմն շփոթել են Ս. Աստվածածնի Վերափոխման եկեղեցու հետ:

11 Իզմայիլ քաղաքի 1770-ական թթ. տեղագրական ուսումնասիրության համատեքստում Ա. Կրասնոժոնը (Օդեսա) նշում է, որ 1770 թ. ռուսական մի հատակագծում առկա են հայկական երկու եկեղեցիներ, որոնցից մեկը, ըստ նույնի, կառուցվել է նախկին Ս. Աստվածածնի Վերափոխման եկեղեցու տեղում, իսկ մյուսը 1790 թ. ռազմական գործողությունների հետևանքով մեծապես վնասվել էր, որի տեղում էլ, հավանաբար, կառուցվել է ներկայիս ուղղափառ Ս. Վերափոխման եկեղեցին (տես **Красножон А.**, *Армянские церкви Измаила в контексте исторической топографии города 1770-х годов*, «До 250-Річчя вірменської церкви в Бережанях актуальні питання вірменознавства», [Бережань], 2014, II, էջ 99-101):

12 Տես **Կучուկ-Կոստանով Խ.**, *Старинные армянские надписи и старинные рукописи в предьялах Юго-Западной Руси и вь Крыму*, «Древности восточныя. Труды Восточной комиссии Императорскаго московскаго археологическаго общества», ред. **Крымского А. Е.**, т. 2, вып. III, М., 1903, էջ 61, ծնթ. 16: Այս մասին տես նաև **Красножон А.**, նշվ. աշխ., էջ 99-100:

13 Տես **Կучուկ-Կոստանով Խ.**, *Старинные армянские надписи и старинные рукописи в предьялах Юго-Западной Руси и вь Крыму*, էջ 61-62: Արձանագրություններից մեկը, որն իրականում չորս արձանագրություն է մի տապանաքարի վրա, Քուչուկ-Հովհաննիսյանը ներկայացրել է պատմողական ձևով, ըստ որի ննջեցյալները 3-7 տարեկան չորս երեխաներ են, որոնք մահացել են 1737 թ. ինչ-որ համաճարակային հիվանդությունից: Սրանց ծնողները Պարսկաստանի Խոյից, ինչպես նաև Նախիջևանից են (**Կучուկ-Կոստանով Խ.**, էջ 62):

14 Տես ԴՀԿ, պրակ VII, էջ 257-258, արձ. 614-620:

մեզ հայտնի տվյալներով, Իզմայիլից նախկինում հրատարակվել է յոթ արձանագրություն, որոնցից մեկն իր բնույթով շինարարական է և թվագրված է 1763 թվականով, իսկ վեցը տապանագրեր են՝ թվագրված 1556-1749 թվականներով: Նյութն ամբողջացնելու նպատակով նախ ներկայացնենք այդ վիմագրերը:

1. Ա. Աստվածածին եկեղեցու նորոգման վիմագիրը՝ որմնաքարերից մեկին.

Ողորմութեամբ Այ, ի հիմանէ նորոգեցաւ Եբ Աստուածածին եկեղեցիս, ի հայրապետութեան Եբ Էջմիածնի տն Յակօբայ սրբազնագոյն կաթողիկոսին եւ ի պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմին Կարապետի և ի պատրիարքութեան Կ. Պօլսոյ տեառն Յակօբ աւստուածաբան արքեպիսկոպոսին, վերակացութեամբ եւ յորդորմամբ եւ արդեամբ քահանայի եւ ժողովրդոց քաղաքիս եւ ըստ հրամանան... եւ աշխատութեամբ եւ արդեամբք արեւելցի մահտեսի Մաղաքիային եւ եղբօրն մահտեսի Յակօբին, այլեւ յիշեսջիք զարեւելցի մահտեսի Պերխուդարին, որ աշխատութեամբ եւ յովով արդեամբք օգնեաց շինութեամբ եկեղեցիս եւ տուք զողորմին ամենայն ջատագովաց. ամէն: Ի ՌՄԺԲ. (1763) թին Հայոց, յունվարի Ժ. (10)¹⁵:

Վիմագիրը վերահրատարակում ենք՝ հարազատ մնալով առաջին հրատարակիչ Քուչուկ-Հովհաննիսյանի վերծանությանը, որն այն ընդօրինակել է անմիջապես բնագրից: Բովանդակային առումով աղբյուրագիտական մեծարժեք այս վիմագրի հիման վրա կարելի է փաստել, որ եկեղեցին 18-րդ դարի երկրորդ կեսին ոչ միայն կանգուն է եղել, այլև հիմնանորոգվել է: Ուշագրավ է, որ գրիչը հարկ է համարել թվարկել տվյալ ժամանակաշրջանի հոգևոր առաջնորդների, նախ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ե. Շամախեցու, որը, նախորդելով Սիմեոն Երևանցուն, գահակալել է 1759-1763 թթ., ապա՝ Երուսաղեմի Կարապետ Գանձակեցի (1761-1768) և Կ. Պոլսի Հակոբ Նայյան Զմմառեցի (1741-1748, 1752-1764) պատրիարքների անունները: Այնուհետև հիշատակվում է տեղի հոգևոր ու աշխարհիկ դասը, որի նյութական միջոցներով իրականացվել է եկեղեցու նորոգումը. «Արդեամբ քահանայի եւ ժողովրդոց քաղաքիս»: Ցավոք, եղծված է բուն նախածեռնողի անունը, քանի որ «եւ ըստ հրամանան» արտահայտությունից հետո հրատարակիչը կախման կետեր է դրել: Սրան հաջորդում են նորոգչական աշխատանքներին իրենց անմիջական մասնակցությունն ունեցած մահտեսի Մաղաքիայի, նրա եղբայր մահտեսի Հակոբի, մահտեսի Բարխուդարի (Պերխուդար) անունների հիշատակությունները: Վերջում թվականն է, որը, ըստ էության, վերաբերում է եկեղեցու վերածմանը՝ 1763 թ., հունվարի 10:

15 Վիմագրերի նախորդ հրատարակությունների մատենագիտությունը ներկայացնում ենք՝ նշելով հեղինակի ազգանունը, հրատարակության տարեթիվը, էջը, առկայության դեպքում՝ նաև արձանագրության համարը, այսպես՝ **Кучук-Иоаннесов**, 1903, 61; **Թրամանյան**, 1986, 45; **Тораманян**, 1991, 57-58; **Գրիգորյան**, 1996, 257⁶¹⁴; **Красножон**, 2014, 100; **Սահակ վրդ. Շաքարյան**, 2014, 122:

Անցնենք տապանագրերին:

2. Տապանաքար. գտնվելիս է եղել երբեմնի եկեղեցու տարածքում.

Շիրիմս այս է գերեզման Թոխաթցի Փերիատի որդի, անուն նորա Մանուկ կոչի, ԼԵ. (35) ամեայ հասակի փոխեցաւ թվին՝ ՌԵ. (1556), ԺԵ. (15) օգոստոս, որք հանդիպիք, սիրելիք, յիշեցէք զսա ողորմելի¹⁶:

Ննջեցյալը ծագումով Թոխաթից (Թոքատ, Եվդոկիա) Փերիատի որդի Մանուկն է, որը կյանքից հեռացել է վաղաժամ 35 տարեկան հասակում՝ 1556 թ. օգոստոսի 15-ին: Տապանագրի թվագրումն առանձնակի արժեք ունի, քանի որ այն փաստական աղբյուր է քաղաքի հիմնադրման խնդիրներին առնչվող թեական հարցերը լուծելու համար:

3. Տապանաքար. գտնվելիս է եղել երբեմնի եկեղեցու տարածքում.

Այս է տապան հանգստեան Մարկոսի՝ որդի Խարամանցի Նաւասարդի, որ փոխեցաւ առ ՔԵ, թվին՝ ՌՃԼԶ. (1687), օգոստոսի ԺԲ. (12)¹⁷:

Մարկոսի որդի Խարամանցի Նավասարդը վախճանվել է 1687 թ. օգոստոսի 12-ին: Խարամանը կամ Կարամանը Լեռնային Կիլիկիայի նահանգներից է, որի կենտրոնը համանուն Կարաման քաղաքն էր: Հետագայում այս տարածքն ընդգրկվել է Ադանայի նահանգի կազմում¹⁸:

4. Տապանաքար. գտնվելիս է եղել երբեմնի եկեղեցու տարածքում.

Այս է տապան Շուրժուացի խոճայ Ղազարի որդի Խոշխապարին, որ փոխեցաւ թվին՝ ՌՃԽԹ. (1700), ամիս սեպտեմբերի, Հայր մեր...¹⁹:

Ննջեցյալը խոջա Ղազարի որդի Խոշխաբարն է, որը Շուրժուայից է: Վերջինս թերևս միևնույն Շորժան է՝ Նոր Բայազետի գավառի Շորժա գյուղը, որը հայտնի է նաև **Շուրջա** անունով: **Խոշխաբար** անձնանունը պարսկական ծագում ունի և ստուգաբանորեն նշանակում է «բարի լուր», ինչպես մեր **Ավետիս**-ը: Աղբյուրներում հիշատակվում է 16-րդ դարից հետո²⁰:

5. Տապանաքար. գտնվելիս է եղել երբեմնի եկեղեցու տարածքում.

Այս է տապան հանգստեան Իսմայելցի աւագերէց տէր Ստեփանի դուստր Ճօհերին, որ հանգեաւ ի ՔԵ, թվին՝ ՌՃՂԲ. (1743), սեպտեմբերի ԺԵ. (15)²¹:

16 Кучук-Иоаннесов, 1903, 62₃: **Գրիգորյան**, 1996, 257₆₁₆:
 17 Кучук-Иоаннесов, 1903, 62₄: **Գրիգորյան**, 1996, 258₆₁₇:
 18 Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմողներ **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, հատ. 3, Եր., 1991, էջ 15:
 19 Кучук-Иоаннесов, 1903, 62₂: **Գրիգորյան**, 1996, 257₆₁₅:
 20 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ., Եր., 1944, էջ 524:
 21 Кучук-Иоаннесов, 1903, 62₅: **Գրիգորյան**, 1996, 258₆₁₈:

Տապանագրում հիշատակված է իսմայիլցի, այսինքն՝ տեղացի Տ. Ստեփանն ավագ քահանայի դուստր Ճոհերը, որը վախճանվել է 1743 թ. սեպտեմբերի 15-ին:

6. Տապանաքար. գտնվելիս է եղել երբեմնի եկեղեցու տարածքում.

Այս է տապան Թիֆլիզցի մահտեսի Սահակի որդի Մանուկի, որ փոխեցաւ թվինյ ՌՃՂԸ. (1749)²²:

7. Միևնույն տապանաքարին.

Այս է տապան Թիֆլիզցի մահտեսի Սահակի դուստր Աննայի, որ փոխեցաւ թվինյ ՌՃՂԸ. (1749)²³:

Ակներն է, որ այս և նախորդ տապանագրերում հիշատակված թիֆլիսեցի Մանուկն ու Աննան նույն մահտեսի Սահակի զավակներն են: Այդ է փաստել նաև արձանագրության առաջին հրատարակիչ Քուչուկ-Հովհաննիսյանը:

Բ. Եկեղեցական առարկաների արձանագրություններ

Այն, որ Իզմայիլի հայերի շրջանում զարգացած է եղել արիեստագործությունը, վկայում է Գրիգորիոպոլի հայկական եկեղեցիներից մեկում պահպանված երբեմնի սկիհի 1750-ով թվագրված արձանագրությունը, ըստ որի՝ սկիհը նվիրաբերվել է Իզմայիլի Ս. Աստվածածին եկեղեցուն՝ ի հիշատակ տեղի «թերզի ախարտոցն», այսինքն՝ դերձակների համքարությանը: Բնագիրը հետևյալն է.

8. Յիշատակ է սկիհս Իզմայելցոյ թերզի ախարտոցն, ձեռամբն մահտեսի Յակոբին, ի դուռն Սբ. Աստուածածնայ եկեղեցուն, թվին ՌՃՂԸ. (1750)²⁴:

Հատկանշական է նաև դարձյալ Գրիգորիոպոլի եկեղեցական առարկաների հավաքածուից հայտնի ժամանակամերձ մեկ այլ արձանագրություն, ըստ որի՝ Իզմայիլի նույն Ս. Աստվածածին եկեղեցուն նվիրաբերվել է խոյր (բնագրում թագ).

9. Յիշատակ է թագս Թոխասցի մահտեսի Աստուածատուրի որդի Ֆերիաստին եւ իւր ծնողացն. Իսմայէլ, ի դուռն Սբ. Աստուածածնայ եկեղեցւոյն, թվին ՌՍ. (1751)²⁵:

Վկայակոչված արձանագրություններն ուշագրավ սկզբնաղբյուրներ են ոչ միայն Իզմայիլի հայ համայնքի, այլև Ս. Աստվածածին եկեղեցու պատմության ուսումնասիրման համար:

22 Кучук-Иоаннесов, 1903, 62^{6a}: Գրիգորյան, 1996, 258⁶¹⁹:


23 Кучук-Иоаннесов, 1903, 62^{6b}: Գրիգորյան, 1996, 258⁶²⁰:

24 Кучук-Иоаннесов, 1896, 4₂: Тораманян, 1991, 49: Թորամանյան, 1986, 44: Գրիգորյան, 1996, 322⁷⁷⁴:

25 Кучук-Иоаннесов, 1896, 5₄: Тораманян, 1991, 49: Թորամանյան, 1986, 44: Գրիգորյան, 1996, 322⁷⁷⁵:

Գ. Նորահայտ արձանագրությունները

1 (10). Ինչպես վերը նշեցինք, նորահայտ տապանագրերը երկուսն են, երկուսն էլ՝ թվակիր, որոնցից համեմատաբար հնագույնը 1725-ով թվագրված խեցեքարե տապանն է, որը ներկայումս գտնվում է Իզմայիլի Յուլիուս Ֆուչիկի փ. 184 հասցեում բնակվող Աշխ Մարիա Իվանովնայի տան բակում (չափսերը՝ 1,10 x 0,20-0,25 x 0,36 մ, տառերի բարձրությունը՝ 4,5 սմ): Վերջինիս հաղորդմամբ՝ 1950-1960-ական թթ. տապանաքարն իրեն անհայտ վայրից տեղափոխել է հայրը: Այժմ պայմանավորվածություն է ձեռք բերվել Իզմայիլի պատմա-գավառագիտական թանգարանի հետ՝ կոթողն այնտեղ տեղափոխելու և ցուցադրելու նպատակով, որն, ի դեպ, արդեն տեղափոխել են: Պարոն Սերժիու Մատվեկից ստանալով արձանագրության ինչպես ամբողջ, այնպես էլ հատվածական լուսանկարները՝ հաջողվեց վերծանել հետևյալը²⁶.



«ԱՆԵՂ ԱՅՆ ԿՈՆՇԵՑԻ ՏԷՂ ՊԻԼՊՈՍԻՆ, /
 ԵՒ ԽԱՆՂԶԻՆ: ԹԻՒՆ՝ ՌՃՀԴ.-ԻՆ (1725) +»

Վիմագրում հիշատակված են տեր Պիլպոսը (Փիլիպոս) և, թերևս, նրա կողակից Խանղզը, որոնք, ըստ ամենայնի, վախճանվել են միաժամանակ՝ 1725 թ.: Քարի եզրի վնասված լինելու պատճառով արձանագրության սկզբնամասի վերծանությունը փոքր-ինչ պայմանական է. առաջին հայացքից ընթեռնելի տառախումբն իմաստային առումով չի շաղկապվում բուն բնագրին: Ըստ այդմ հավանական ենք համարում, որ տեր Պիլպոսը ծագումով ներկայիս ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ (միջնադարում՝ նաև Կուաշ, Կվաշ) գյուղից է, իսկ սկզբի երկու բառը կարդացել ենք ԱՆԵՂ ԱՅՆ (վերջինը՝ թերևս Աստուծոյն), այսինքն՝ ննջեցյալներն ինքնագոյ Աստծու քրիստոնյա զավակներն են:

²⁶ Պարոն Ս. Մատվեկի խնդրանքով արձանագրությունն ավելի վաղ փորձել է վերծանել հնագետ Հանյետ Պետրոսյանը, ըստ որի՝ վիմագրի սկիզբը թերևս չի պահպանվել, իսկ հնարավոր վերծանությունը հետևյալն է. «ՆԵՂԱՅՆ ՊԼԻՊՈՍԻՆ, ԽԱՆՂԶԻՆ» (այս նախնական վերծանությունը մեզ է տրամադրել Սերժիու Մատվեկը):

Խանդզ անձնանվան այլ վկայություն մեզ հայտնի չէ: Աճառյանը հիշատակում է **Խանխանդզ** իգական անվանաձևը, որը մի անգամ հանդիպում է 1597-ով թվագրված ձեռագրում²⁷: Կարելի է ենթադրել, որ խնդրո առարկա տապանագրում վկայված **Խանդզ**-ը վերջինիս կրճատ տարբերակն է:

2 (11). Արձանագիր երկրորդ տապանաքարը, որը հայտնաբերվել է Իզմայիլի բերդի տարածքից, ցուցադրվում է Ալ. Սուվորովի անվան պատմության թանգարանի բակում (չափսերը՝ 0,79 x 0,58 x 0,21 մ, տառերի բարձրությունը՝ 3,5 սմ): Մարմարյա ուղղանկյունաձև տապանաքարի վերին հարթ մակերեսն ունի երկմաս մշակում. հարդարանքի կենտրոնում մեծադիր զույգ խորաններ են, սրանց մեջ՝ սափորով ծաղիկներ (խորաններից մեկը եղծված է): Ինչպես հաստատում է նաև տապանագրի բովանդակությունը, այն կերտվել է երկու ննջեցյալի համար: Եռատող արձանագրությունը հետևյալն է.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԴԱՏԵՂԱՆ ՊՍԱՏՅԻ ԱՐԼԱՀԱՄԻ /
ԴՈՒԽՍՐ ԱՐՁՈՒԿԱՆԻՆ ԵՒ ԾԱՏՐԻ ՈՐԴԻ ՅՈՒԷՓ/ԻՆ,
ՈՐ ՓՕԽԵՑԱԻ Ի ԿԷԱՆՍ: ԹՎԻՆ ՈՄԷ.-ԻՆ (1758):

²⁷ Տե՛ս Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ., էջ 462:

Դատելով տապանագրի բովանդակությունից՝ ննջեցյալներն են ծագումով պստացի, այսինքն՝ Նախիջևանի Օրդուբադի շրջանի Բիստ գյուղից Աբրահամի դուստր Արզուխանը և Ծատուրի որդի Հովսեփը, որոնք թերևս ամուսիններ են և վախճանվել են միաժամանակ:

Տապանագրերի ընդհանուր քննությամբ պարզվում են նաև Իզմայիլ գաղթած հայերի բուն բնակության աշխարհագրական սահմանները, որոնք են Թոքատը, կիլիկյան Կարաման քաղաքը, Թիֆլիսը, Նախիջևանի Բիստ գյուղը, ներկայիս Հայաստանի Կոշ, Շորժա գյուղերը:

Դ. Վավերագրեր Իզմայիլի հայերի առևտրական գործունեության մասին

Իզմայիլում ապրող առևտրական հայերի լայն կապերի ու զբաղվածության մասին են վկայում Բուխարեստի հայկական միության արխիվում պահվող 1790-ով և 1795-ով թվագրված զույգ վավերագրերը՝ իզմայիցի վաճառական Մելքոնի անվան հիշատակմամբ: Վավերագրերից մեկը բովանդակում է Մելքոնի խնդրագիրը՝ ուղղված տեղի աղային՝ Իզմայիլից Ստամբուլ մեկնելու և պատվերը ստանալու նպատակով: Վավերագիրն արաբատառ է, թվագրված է «Հիջրի 1204 թ.» (=1789/90 թ.), բաղկացած է չորս մասից՝ հարցում, վաճառականի մասին տեղեկություն, աղայի դրական կարծիք, ուղևորության թույլտվություն: Մյուս վավերագիրը հայերեն է, բավականին լավ պահպանված, որի բնագիրը տեղին ենք համարում վկայակոչել:

«Զորութին գրոյս այս է, որ եղև ի քաղաքն Եաշ, ի թվին Հայոց ՌՄԽԴ.-ին (1795) և ամսեանն ապրիլի ԺԵ. (15) օրին, որ Ես՝ մահտեսի Գաբրիէլս և Ես՝ Մելքոնըս, օրթախ էղանք անցեալ տարի ՌՄԽԴ.-ին (1794), ապրիլի ԺԵ.-ին (15) և ի լրման տարւոյն նստանք հէսապ արինք Ա. (մի) թամամ և դարձեալ Աստուծոյ հրամանաւ խորհուրդ արինք այս տարի օրթախ էղանք, ի վերոյ գրեալ թվակա նիս ՌՄԽԴ.-ին (1795), ապրիլի ԺԵ.-ին (15) ԴՌԶԾԿ. (4660) մարչիլ Ես՝ մահտեսի Գաբրիէլս դրի սէրմայէ և ԵՃ. (500) մարչիլ Ես՝ Մելքոնըս դրի և այս խաֆիլովս, որ ինչ Աստուած տայնէ, թէ շահ, թէ զէն, կեսըն իմն լինի և կեսն Մելքոն աղբորն և վասն հաւատարմութեան շինէցինք այս վկայեականս, որ ի դիպող ժամու վկայեսցէ տեսողաց և լսողաց հաճոյ թվեսցի և մեր կաման եղև, մեզ դապուլ է: Ես՝ տէր Ներսէսըն, գրեցի Աստուծոյ համար, վկայ եմ: Ես՝ Ղայսարացի Գրիգոր, այս բանիս վկայ եմ: Ես՝ Եղիյաս, վկայ էմ: Ես՝ տիրացու Մըկըրտիչըս,

վկայ էմ: Իմ Մելքոնիս կաման է (նշված անունների կենտրոնում առկա է ութանկյուն կնքադրոշմ)²⁸:

Դատելով բնագրի բովանդակությունից՝ այն աշխատանքային համաձայնագիր է, որը կնքվել է վաճառականներ մահտեսի Գաբրիելի և Մելքոնի միջև: Ըստ պայմանավորվածության՝ հիշյալ անձինք դեռևս նախորդ՝ 1794 թ. օրթախ, այսինքն՝ առևտրային գործարքի ընկերակից լինելու իրենց առաքելությունը թողթով վավերացրել են նաև մեկ տարի հետո, համաձայն որի՝ Գաբրիելը (սերմայե) գործարքն սկսելու համար իբրև դրամագուլիս տրամադրել է 4660, Մելքոնը՝ 500 մառչիլ, այսինքն՝ եվրոպական արծաթե դրամ, որից ստացված եկամուտը, ըստ վկայագրի, պետք է հավասարապես կիսվեր նրանց միջև: Վավերագիրը կնքված է: Այն ստորագրել են տեր Ներսեսը, տիրացու Մկրտիչը, ղայսարացի Գրիգորը և Եղիան: Չնայած **Իզմայիլ** տեղանունն այս բնագրում ուղղակիորեն վկայված չէ, այդուհանդերձ կարծում ենք, որ հիշատակվածը նույն վաճառական իսմայիլցի Մելքոնն է:

Այսպիսով՝ Իզմայիլից հայտնի գրավոր սկզբնաղբյուրների առկայությունն առաջին հերթին այս բնակավայրում 18-րդ դարում գոյություն ունեցած երբեմնի սովոր հայ համայնքի վկայությունն է: Նորահայտ տապանագրերն առիթ դարձան վերստին անդրադառնալու մոլորվահայ համայնքի պատմությանն ու այսօր արդեն չպահպանված վիմական արձանագրություններին: Վստահ ենք, որ ինչպես Իզմայիլում, այնպես էլ հայկական մյուս գաղթօջախներում դեռ շատ անտիպ հայերեն վիմագրեր կան, որոնք սպասում են իրենց հետազոտողներին:

Արսեն Է. Հարությունյան - գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայկական վիմագրությունն ու ձեռագրագիտությունը: Ներկայումս զբաղվում է Արմավիրի մարզի և Տաթևի վանքի վիմագրական ժառանգության, ինչպես նաև միջնադարյան Երևանի գրչօջախների ուսումնասիրությամբ: Հինգ գրքերի և վեց տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է:

Էլեկտրոնային հասցե՝ ars.vimagraget@gmail.com

Սերժիու Վ. Մատվեև - Քիշնևի պետական համալսարանի պատմության և հնագիտության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է մ. թ. ա. I հազարամյակի առաջին կեսի էթնոմշակութային հիմնախնդիրները, անտիկ և միջնադարյան դրամագիտությունը, հնագիտական հետազոտությունների պատմությունը: Հեղինակ և համահեղինակ է երեք գրքերի և ավելի քան հիսուն գիտական հոդվածների:

Էլեկտրոնային հասցե՝ sssmatveev@yahoo.com

28 **Siruni H.**, Armenii in viata Economica a țărilor Române, «Balcania» II-III. 1939-1940, București, ներդիր II, V: Հմմտ. նույն աշխատության առանձին հրատարակությունը (București, 1944):

ARMENIAN EPIGRAPHIC SOURCES OF IZMAIL: NEWFOUND ITEMS

Arsen E. Harutyunyan
Sergiu V. Matveev (Qishnev)

Key words - Izmail, Armenian community of Moldova, church, epigraph, tombstone, Kuchuk-Hovhannisyanyan, Bessarabia, cemetery, document.

The Armenian community of Moldova was formed at least in the 10-11th centuries and developed in the 14-15th centuries after the establishment of Moldovian power in 1359. The town of Izmail previously located in the province of Bessarabia and at present within the region of Odessa of Ukraine, before its fortress having been taken by generalissimo A. Suvorov in 1790 it used to be one of the famous Armenian centers of Moldova where Armenians had several churches, were engaged in handicraft (especially in tailoring) and trade. About a dozen of epigraphs located in the Armenian cemetery adjacent to St. Astvatsatsin Church were still published by Christopher Kuchuk-Hovhannisyanyan at the beginning of the last century which evidence about once the dense Armenian community. One of the epigraphs is about the church renovation activities which were accomplished in 1763, during the reign of Catholicos of All Armenians Hakob Shamakhetsi and by donations of local spiritual and secular representatives. The other epigraphs are epitaphs dated 1556-1749.

Unfortunately, those epigraphs have not been preserved but two epitaphs have recently been discovered in Izmail. One of them is situated in the yard of Maria Ivanovna's house (Fuchik str. 184). It is dated 1725 and bears the names of deceased Friar Pilpos and probably his wife Khanghaz. The other tombstone is exhibited in the yard of Historical Museum of Izmail after O. Suvorov. It is dated 1758 and also bears the names of two deceased – Arzukhan from Bist Village (in Nakhijevan) and probably her husband Hovsep, son of Tsatur. The discovery of new tombstones again reaffirmed the active life of Armenian community in Izmail especially in the 18th century as well as served as an occasion to refer to the history of this Armenian colony and non-preserved epigraphic inscriptions in a new way.

АРМЯНСКИЕ ЭПИГРАФИЧЕСКИЕ ИСТОЧНИКИ ИЗМАИЛА: НОВЫЕ НАХОДКИ

Арсен Э. Арутюнян
Сержиу В. Матвеев (Кишинев)

Ключевые слова - Измаил, армянская община Молдовы, церковь, эпитафия, надгробье, Кучук-Оганесян, Бессарабия, кладбище, документ.

Армянская община Молдовы начала формироваться не позднее X-XI веков, а своего расцвета достигла в XIV-XV веках, после установления здесь молдавского господства (1359 г.). Город Измаил (Исмаил) бывшей Бессарабской губернии, а ныне – Одесской области Украины, до взятия местной крепости генералом Ал. Суворовым (1790 г.) был значимым центром армянской диаспоры Молдовы. Здесь было несколько армянских церквей, армяне занимались ремеслами (в особенности портновским делом) и торговлей. О некогда многочисленной армянской общине свидетельствуют опубликованные еще в начале прошлого века Христофором Кучук-Оганесяном около десятка эпитафических надписей, которые были обнаружены на кладбище близ армянской церкви Св. Богородицы. Одна из надписей повествовала о реконструкции церкви, предпринятой в 1763 году при католикосе Акопе Шамахеци на материальные средства местного духовного и светского сословия, другие являются эпитафиями и относятся к 1556-1749 годам.

К сожалению, сами эти надписи не сохранились, однако недавно случайно были обнаружены и задокументированы две другие надгробные надписи. Первая - с приусадебного участка одного из местных жителей, имеющая датировку 1725 г. и сообщающая имена усопших Тер Пилпоса и Хангз. Вторая надпись, выставленная во дворе одного из музеев города, имеет датировку 1758 г. и также сообщает о двух усопших – Арцухане родом из деревни Бист и, возможно, сыне его товарища Цатура Овсепе. Обнаружение новых эпитафий стало еще одним подтверждением активной деятельности армянской общины Измаила в особенности в XVIII веке, а также послужило поводом, чтобы по-новому обратиться к истории этой армянской колонии и к уже утерянным памятным надписям.

REFERENCES

1. **Acharyan H.**, Hayots' andznanunneri bararan, hat. B, Yer., 1944 **(In Armenian)**.
2. **Aleksanjan O.**, Armjane i armjanskaja cerkov' v Moldavii «Iz istorii armjano-ukrainskix, vengerskix i moldavskix odnosnenij», Sbornik statej i materialov, sost. **Xachatrjan K., Aleksanjan O.**, Je., 2012, ss. 167-176 **(In Russian)**.
3. **Ananjan Zh.**, Armjanskaja kolonija Grigoriopol', Jer., 1969 **(In Russian)**.
4. **Ananyan Zh.**, Hayeri Moldavia yev Besarabia gaght'elu patmut'yunits', «Lraber hasarakakan gitut'yunneri», 1966, N 9, ėj 90-98 **(In Armenian)**.
5. **Babayean L.**, Hayerĕ Moldawiayum yew Buk'ovinayum. patma-azgagrakan usumnasirut'iwn, T'iflis, 1911 **(In Armenian)**.
6. **Bezviconi C.**, Morminte armenesti dintre Prut și Nistru, In: H. Dj. Siruni, Anuarul culturii armene (București 1941) 389-393 **(In Romanian)**.
7. **Bzhshkeants' M.**, Chanaparhordut'iwn i Lehastan yew ayl koghmans bnakeals i Haykazants' serelots' i nakhneats' Ani k'aghak'in, Venetik, 1830 **(In Armenian)**.
8. **Chelebi E.**, Kniga puteshestvija (Iz vlechenija iz sochinenija tureckogo puteshestvennika XVII veka), vyp. 1, Zemli Moldavii i Ukrainy, M., 1961 **(In Russian)**.
9. DHV (Divan hay vimagrut'yan), prak VII, Ukraina, Moldova, kazmets'` **Grigoryan Gr.**, Yer., 1996 **(In Armenian)**.
10. Hay gaght'ashkharhi patmut'yun (mijnadarits' minch'ev 1920 t'), hat. A, khmb.` akad. **Mik'ayelyan V.**, Yer., 2003 **(In Armenian)**.
11. Hayastani yev harakits' yerkrmeri teghanunneri bararan, kazmoghner` **Hakobyan T.**, **Melik'-Bakhshyan S.**, **Barseghyan H.**, hat. 3, Yer., 1991 **(In Armenian)**.
12. Hayots' patmut'yun, hat. 3, Nor zhamanakashrjan (XVII dari yerkrord kes - 1918 t'), girk' arajin (XVII dari yerkrord kes - XIX dari verj), khmb. **Melk'onyan A.** ev urishner, Yer., 2010 **(In Armenian)**.
13. **Iorga N.**, Studii istorice asupra Chiliei și Cetății-Albe, București, 1900 **(In Romanian)**.
14. **Krasnozhon A.**, Armjanskije cerkvy Izmaila v kontekste istoricheskoy topografii goroda 1771-x godov, «Do 250-richchja virmens'koj cerkvi v Berezhanax aktual'ni pitanjaja virmenoznavstva», [Berezhn], 2014, II, ss. 97-101 **(In Russian)**.
15. **Kuchuk «-Ioannesov» X.**, Armjanskija nadpisi v` g. Grigoriopol' Xersonskoj gubernii, "Drevnosti vostochnyja" iz` II toma Trudov` Vostochnoj kommissii Imperatorskago moskovskago arxeologicheskago obsh'estva, M., 1896, ss. 4-16 **(In Russian)**.
16. **Kuchuk«-Ioannesov» X.**, Starinnyja armjanskija nadpisi i starinnyja rukopisi v` pred`lax` Jugo-Zapadnoj Rusi i v` Krymu, "Drevnosti vostochnyja. Trudy Vostochnoj kommissii Imperatorskago moskovskago arxeologicheskago obsh'estva", red. Krymskogo A. E., t. II, vyp. III, M., 1903, ss. 33-75 **(In Russian)**.
17. **Shak'aryan Sahak vardapet**, Nor Nakhijevani yev Besarabiayi hayots' t'emĕ, S. Ėjmiatsin, 2014 **(In Armenian)**.
18. **Siruni H.**, Armenii în România cu prilejul unui centenar, București, 1940 **(In Romanian)**.
19. **Siruni H.**, Armenii in viata Economica a țărilor Române, «Balcania» II-III. 1939-1940, București, 1944 **(In Romanian)**.
20. **Toramanjan A.**, Armjane i pamjatniki armjanskoj kul'tury na territorii Moldavii XIV-XIX vv. v istochnikax i literature, «Istoriko-filologicheskij zhurnal», 1976, N 4, ss. 175-185 **(In Russian)**.
21. **Toramanjan A.**, Iz istorii stroitel'noj dejatel'nosti armjan v Moldavii, M., 1991 **(In Russian)**.
22. **T'oramanyan A.**, Moldovayi haykakan patmachartarapetakan hushardzannerĕ, Yer., 1986 **(In Armenian)**.